ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դասակարգված տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Դիտարկվող Համաձայնագրի նախագիծը պատրաստվել է ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ, նկատի ունենալով, որ երկկողմ ռազմական համագործակցության շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումներն իրականացնելու համար հաճախ խոչընդոտներ է առաջացել տեղեկատվության փոխադարձ փոխանակման հարցերով համապատասխան իրավական հիմքի բացակայության պատճառով:

Փաստաթղթի նպատակն է քաղաքական, ռազմական, տնտեսական, իրավական, գիտական, տեխնոլոգիական և այլ համագործակցության շրջանակներում ստեղծվող և փոխադարձաբար փոխանակվող դասակարգված տեղեկատվության, ինչպես նաև նման համագործակցության ընթացքում առաջացած դասակարգված տեղեկատվության պաշտպանությունը և այդ նպատակով համապատասխան կանոնների սահմանման անհրաժեշտությունը: Փաստաթղթին համապատասխան Կողմերը միտված են ապահովել մի Կողմի պետությունում դասակարգված և մյուս Կողմի պետությանը փոխանցված բոլոր տեսակի դասակարգված տեղեկատվության փոխադարձ պաշտպանությունը՝ ստեղծելով երկու Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան Կողմերի միջև փոխանակվող դասակարգված տեղեկատվության փոխադարձ պաշտպանության կանոնների ամբողջություն:

Փաստաթղթի դրույթներով սահմանվում է Համաձայնագրի նպատակների համար օգտագործվող հասկացությունները:

Համաձայնագրի դրույթներով սահմանվում են Կողմերի միջև համագործակցության ընթացքում ստեղծվող կամ փոխանակվող դասակարգված տեղեկատվության պաշտպանության եղանակները, միջոցները, դրա հետ առնչվելու կարգը, թույլատվությունը, դասակարգված տեղեկատվության փոխանցման, վերարտադրման, թարգմանության կարգը, Կողմերի պետություններում գործող անվտանգության դասակարգման աստիճանների համադրումը, անվտանգության ռեժիմի և դասակարգված տեղեկատվության պաշտպանության ուղղությամբ Կողմերի պարտավորությունները և այլն:

Համաձայնագրի դրույթների իրականացումը Հայաստանին հնարավորություն կտա իրավական հիմքի վրա դնել երկկողմ համագործակցության ընթացքում ստեղծվող կամ փոխանակվող դասակարգված տեղեկատվության պաշտպանությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ ժամանակի հրամայականով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել իրավական հստակ կարգավորման ենթարկել երկու պետությունների միջև դասակարգված տեղեկատվության ոլորտի հարաբերությունները, ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև դասակարգված տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի կնքման նպատակով սկսել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Ս.ՕՀԱՆՅԱՆ